

368.5

Ա-11

ԱՊԻ ՀԱՅԱՍՏ. ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԿՏԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԲՈՒՍԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
===== ԿԱՆՈՆՆԵՐ =====

Յ Ե Ր Ե Վ Ս Ն
1929

19 FEB 2013

1 MAR 2010

ԱՆԴՐՈՒՄԵՏԱԿԻ ՀԱՅԱՍՏ. ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

368.5

Ա-11

ԱՄ

ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՍԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
===== ԿԱՆՈՆՆԵՐ =====

124



14842-57

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1929

ՀԱՅԳՈՂԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊԱՐ.
ԳՐԱՌ. № 1657 Բ. ՊԱՏՎԵՐ № 1419
ՏԻՐԱԺ 3000.

Հայկաճառագրություն և տված
Ս. Խ. Հ. Մ. Ֆ. Ժ. Կ. Կեղ
Ապահովագրական Խոր-
հրդի Կողմից 20/X 1928
թ. (արձանագր. № 39):

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ս. Խ. Հ. Մ. Ֆ. Ժ. Կ. տեղա-
կալ՝ Մ ՖՐՈՒՄՎԻՆ.
27-ն սեպտեմբ. 1928 թ.

ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԱ- ՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ I.

§ 1. Բուսական մշակույթների կարկտահարու-
թյունից պետական կամավոր ապահովագրությունը
կատարվում է սույն կանոնների համաձայն ըստ վո-
րում Պետապը վճարում է կարկտահարություն և նը-
րան ուղեկցող հեղեղի պատճառած վնասը բուսական
մշակույթներին:

ԾԱՆՈԹ.— Հետագա բոլոր հոգվածներում
կարկտահարություն և դրան ուղեկցող հեղեղնե-
րի հիշատակության փոխարեն կհիշատակվի
կրճատված կերպով միայն կարկտահարություն
մասին:

§ 2. Կամավոր կարգով Պետապը ապահովա-
գրում է հետևյալ բուսական մշակույթները:

ա) Սերմահատ, յուղարեր, բուժական, արմա-
տավոր (տակուեքներ), մանվածալին և կերի բույսեր:
բ) Պտղատու տունկերը և այդ տունկերի տըն-
կարանները:

դ) Թեյի և ծխախոտի մշակույթները:

դ) Վերոհիշյալ բոլոր բույսերի տնկարանները:

§ 3. Բուսական մշակույթների կարկտահարութեան ապահովագրութեամբ Պետապը պատասխանաւորու յե դառնում ա) կամ այդ բույսերի բերքի վընասի համար, բ) կամ այդ բույսերին կարկտահարութեամբ հասած վնասի համար, գ) կամ առաջի և յերկրորդ վնասի համար միաժամանակ:

ԾԱՆՈԹ. — Ապահովագրական անդորրագրի մեջ պետք է հիշատակված լինի, թե Պետապը ըստ տվյալ ապահովագրութեան, ինչպիսի պատասխանատվութիւնն է ընդունել իրա վրա:

§ 4. Պետապը պատասխանատու յե § 2-ում թըված բոլոր բուսական մշակույթների, բացի ծխախոտից, խաղողից և պտղատու ծառերից, այն վնասի համար, վորը արտահայտվում է քանակի նվազումով՝ բերքի քաշի միավորներով, իսկ իրեն, բույսերի համար թվի, քանակութեան նվազումով, սակայն պատասխանատու չե վորակի նվազման մասին:

Ծխախոտի, խաղողի և պտղատու տունկերի վերաբերմամբ Պետապը պատասխանատու յե նաե կարկտահարութիւնից առաջացած բերքի վորակի պակասեցման բացի այն դեպքերից, յերբ վերոհիշյալ բուսական մշակույթները, մինչև նրանց ապահովագրելը հիվանդ են յեղած վորե և հիվանդութեամբ:

§ 5. Բուսական մշակույթների բերքի վնասի վերաբերմամբ Պետապի պատասխանատվութեան նպատակն է ապահովել ապահովագիրի սպասելիք յեկամուտը բերքի բարեհաջող աճման ու վախճանի ընթացքից:

Սպասվելիք յեկամուտի չափը վորոշվում է գումարելով՝ ա) յենթադրվելիք բերքի քանակութիւնը, վորը վորոշվում է տվյալ տնտեսութեան միջին բերքատվութեան, կամ այդպիսի բացակայութեան դեպքում, նախորդ տարիների որինակով, կամ հարևանների համանման բերքատվութեան չափով. բ) բերքի որինական գնի վրա: Իսկ այն դեպքում, յերբ բերքը շուկա յե հանվում վորպես հում նյութ, կամ կիսահումնյութ, վաճառելու նպատակով, ապա այդ հում նյութի գնի վրա: Գները ընդունվում է պաշտոնական գներով, իսկ այդպիսի բացակայութեան դեպքում, շուկայի գներով:

Այն դեպքերում, յերբ Պետապի պատասխանատվութիւնը նպատակ ունի փոխարինելու իրենց, բույսերին, հասած վնասների պատասխանատվութեան չափը վորոշվում է այդ բույսերը շուկայում գնելու և նրանց աճեցնելու ծախքի չափով: Այն դեպքերում, յերբ բուսական մշակույթները ապահովագրում են թե բերքի վնասից և թե բույսերի, իրենց, վոչնչանալուց կամ վնասվելուց, Պետապի պատասխանատվութիւնը վորոշվում է վերեում հիշատակված կարգով:

ԾԱՆՈԹ. 1. Վորպես կիսահումնյութ, բուսական մշակույթների բերքի, վոր վերամշակվում է յերկրագործի իրա իսկ ուժերով, շուկայում վաճառելու կամ պետական մատակարարներին հանձնելու վորպես պտրաստ ապրանք:

ԾԱՆՈԹ. 2. Այն դեպքերում, յերբ, բույսի բնույթին համապատասխան, բերքը հավաքվում հաջորդաբար, Պետապի պատասխանատվութեան չափը վորոշվում է չհավաքված բերքի արժեքի չափով:

§ 6. Բուսական մշակույթները կարող են ապահովագրել թե սեփականատերերը, թե գրավ վերցնողները, թե կապալառուները, թե վարկատուները և առհասարակ այն բոլոր անձնավորությունները, վորոնք ընականորեն շահագրգռված են բուսական մշակույթների կարկտահարությունից ապահովագրությունը:

Այն դեպքերում, յերբ բուսական մշակույթները ապահովագրել է վոչ թե տերը, այլ մի ուրիշ անձնավորություն, վորը ուղղակի շահ ունի ապահովագրական գումարի բարձրացումից, ապահովագրական գումարի և այդ ապահովագրողի շահի բարձրացումի տարբերության չափով, վնասի դեպքում այդ տարբերությունը տրվում է այդ անձնավորության:

§ 7. Պետապը իրավունք ունի հատուկ պայմանավորություններ կնքել ապահովագրի հետ և մուծելու այդ պայմանագրի մեջ այնպիսի պարագաներ, վորոնք չեն նախատեսված սույն կանոններով, վորոնք սակայն հակառակ չեն գոյություն ունեցող որենքներին:

ԳԼՈՒԽ II.

Բուսական մշակույթների ապահովագրության կարգը ու պայմանները

§ 8. Կարկտահարության ապահովագրությունը կնքվում է համաձայն ապահովագրի գրավոր հայտարարության՝ գրված Պետապի մշակված ձևի վրա, վորի բոլոր հարցերին ապահովագիրը պարտավոր է ճիշտ տեղեկանքներ տալ:

§ 9. Տվյալ տնտեսություն միևնույն բուսական միևնույն մշակույթի տեսակին պատկանող բոլոր բույսերը նույնպես պետք է ապահովագրվեն:

ԾԱՆՈԹ. Սույն հոդվածով նիշված պայմանը կարելի չէ և չպահանջել, յեթե ապահովագիրը իրա գրավոր դիմումի մեջ ճիշտ կերպով կգծի ապահովագրված մշակույթի սահմանները և տեղագրությունը:

§ 10. Ընթացիկ տարում բուսական մշակույթները մի անգամ արդեն կարկտահար լինելուց հետո կարելի չէ ապահովագրել միայն Պետապի կողմից նախաձեռնված զննություն կատարելուց հետո:

§ 11. Յեթե կարկտահարության մասին հայտարարություն ներկայացնելուց հետո, յերբ դեռ ևս ապահովագրական վարձատրություն չի ստացված, նորից տեղի ունենա կարկտահարություն ու նոր վնասներ պատճառի, ապահովագիրը պետք է լրացուցիչ տեղեկություններ հաղորդի, առանց ուշացնելու, համապատասխան վիճակի վրա լինելու և ուղղումներ կատարելու համար:

ԳԼՈՒԽ III.

Ապահովագրական գումարներ

§ 12. Յուրաքանչյուր ապահովագրության համար ապահովագրական գումարների չափը վորոշվում է ապահովագրի և Պետապի համաձայնությունամբ, վորոնք պետք է համապատասխան լինեն § 5-ում մատնանշվածին:

§ 13. Յեթե ապահովագրված մշակույթը հավաքվում է (հնձվում) տարվա ընթացքում մի քանի անգամ, ապա ապահովագրությունը տարածվում է ամբողջ սեզոնի վրա: Ապահովագրական գումարը սահմանվում է ամեն մի հավաքական միջին արժեքի չափով:

Ապահովագրության ժամկետները

§ 14. Պետապլի պատասխանատվութիւնը սկըսվում է բուսական մշակութիւնների կանաչելու որովանից. իսկ պտղատու տունկերի համար՝ պտուղների բողբոջների կազմվելու որովանից:

ԾԱՆՈԹ. Յեթե ապահովագրված տունկերի վրա բողբոջներ չեն կազմակերպվում, կամ կազմված բողբոջները թափվում են, ապահովագրութիւնը համարվում է դադարեցված և ապահովագիրն պետք է վերադարձնել ապահովագիրին:

§ 15. Ապահովագրութիւնը սկսվում է (ստանում է իրավական ձեւակերպում) այն որովանից 24 ժամ հետո, վորը նշանակված է ապահովագրական անդորրագրի մեջ:

ԾԱՆՈԹ. Այն դեպքերում, յերբ ապահովագրութիւնը կնքվում է փոստով կամ հեռագրով, ապահովագրութիւնը ստանում է իրա իրավական ձեւակերպումը (ուժը) 24 ժամ այն որովանից հետո, յերբ ուղարկված է փողը-ապահովագիրն:

§ 16. Ապահովագրութիւնը մեքենայորեն համարվում է դադարեցված (վերջացած), յեթե ապահովագրական անդորրագրում չի նիշված ուրիշ ժամկետներ հետեյալ դեպքերում:

ա). Յորենի, գարու, հաճարի, վարսակի, կորեկի, հունակորեկի, սիսեռի, կառվահատի, կանեփի և այլ մանվածքային բույսերի բերքը հավաքելուց 10 որ անցնելուց հետո:

բ). Տնկարանների համար մինչև նոյեմբերի 1-ը:
գ). Մնացած բույսերի համար, ինչպես և բոլոր սեր՝ աճատների համար բերքը հավաքելուց 3 որից հետո:

§ 17. Ապահովագրութիւնը համարվում է ժամկետից առաջ դադարեցված, յեթե բուսական մշակութիւնը կվոճնչանան բոլորովին վոչ թե ապահովագրական գեպքից ինչպես նախատեսված է սույն կանոնների § 1-ում, այլ մի վորե և պատճառից:

ԳԼՈՒԽ V'.

Ապահովագիրն յեվ նրա վճարելու կարգը.

§ 18. Ապահովագրութիւն պայմանագիրը՝ համարվում է կնքված ապահովագրական անդորրագիրը ապահովագիրին հանձնելուց հետո, ապահովագիրից ապահովագիրն ստանալով, կամ նրա վորոշ մասը յեթե հետաձգված ապահովագրութիւն է:

§ 19. Ապահովագրի չափը վորոշվում է Պետապլի տարիֆներով, վորոնք հաստատված են, համապատասխան որենսդրական կարգով:

§ 20. Ապահովագիրն ամբողջ ապահովագրական ժամանակաշրջանի համար ստացվում է սկզբից:

ԾԱՆՈԹ. Պետապլը իրարունք ունի մուճուճների համար ժամկետներ նշանակելու. այդ դեպքում վորե և հերթական վորե և ժամկետին ապահովագիրն չվճարելուց ապահովագրութիւնը համարվում է դադարեցված: Հետաձգված ապահովագրի մուճման ժամկետները պետք է նշանակված լինեն ապահովագրական անդորրագրում:

§ 21. Ապահովագիրներ, ապահովագրութիւններ կըն-
քելուց հետո, այլեւ չի վերադարձրելում բացի այն
գեպքից, յերբ բուսական մշակութիւնները վնասուած
են ուրիշ տարերային դժբախտութիւններից (բացի
կարկտահարութիւնից) մինչև նոր ապահովագրու-
թիւններ:

§ 22. Ապահովագրված բուսական մշակութիւնների
վերացանելու կամ վերատնկելու գեպքում, յեթե այդ
անհրաժեշտ է դարձել Պետապի պատասխանատու-
թյան ժամանակաշրջանում, բացի կարկտահարու-
թիւնից, ուրիշ պատճառներով կամ տնտեսական հե-
ռանկարներով, առաջին ապահովագրութիւնն ապահո-
վագիրներ փոխանցվում են նոր ապահովագրութիւն հաշ-
վին:

§ 23. Յեթե ապահովագրութիւններ կնքելու ժա-
մանակ ապահովագիրներ հաշված լինի սահմանված տա-
րիքից պակաս, ապա ապահովագիրը պարտավոր է
նրան ծանուցագիր հանձնելուց հետո յոթ որվա ըն-
թացքում, մուծել Պետապի գրամարկիւր այդ ապահո-
վագրական պակասորդը: Ապահովագրական պակա-
սորդը նշանակված ժամկետին չվճարելու գեպքում
Պետապը համապատասխան չափով պակասեցնում է
ապահովագրական գումարը:

§ 24. Յեթե բուսական մշակութիւնները ապահո-
վագրված են յեղել մինչև նրանց ցանելը կամ տնկելը
և յեթե բուսանելուց հետո կպարզվի, վոր բույսերի
տեսակը կամ ցանքսի տարածութիւնը փոխվել են,
ապա ապահովագիրը պարտավոր է վճարել նորից
ապահովագրի տարբերութիւնը: Յեթե նա յոթ որվա
ընթացքում չմուծի այդ տարբերութիւնը, ապա տե-

ղի կոնենսա այն հետևանքները, վորոնք մատնանշ-
ված են § 23-ում: Իսկ յեթե պարզվի, վոր ապահովա-
գիրը ավել է մուծված, ապա պետք է վերադարձնել
այդ ավել ստացածը ապահովագիրին:

ԳԼՈՒԽ V.

Նոգմեթի փոխառաքերութիւնները միջեկ ապահո-
վագրական գեպքը

§ 25. Ապահովագիրը պարտավոր է վերացանելու
կամ վերատնկելու, ինչպեւ և ուրիշ փոփոխութիւն-
ներ առաջանալու գեպքում, վորոնք առաջացել են
նրա ապահովագրված բուսական մշակութիւնների վերա-
բերմամբ և վորոնք չեն առաջացել կարկտահարու-
թիւնից, յոթ որվա ընթացքում ներկայացնել նոր
հայտարարութիւն կազմած սույն կանոնների § 8-ում
ցույց տրված կարգով: Այդ նոր հայտարարութիւն
համաձայն կնքվում է նոր ապահովագրութիւն հաշ-
վի առնելով առաջուց վճարված ապահովագիրներ:

Պետապը իրավունք ունի իրա ցանկացած ժա-
մանակ տեղում ստուգելու ապահովագիրի հայտարա-
րութիւնն մեջ ցույց տված տեղեկութիւնների ճշտու-
թիւնը այդ գործում ապահովագիրը պարտավոր է
աջակցել Պետապին:

§ 27. Այն գեպքում, յեթե հայտնաբերվի ան-
համատասխանատուութիւն հայտարարութիւնն տեղե-
կութիւնների և փաստական տվյալների միջև, Պե-
տապը իրավունք ունի համապատասխան փոփոխու-
թիւններ մտցնելու ապահովագրական փաստաթղթե-
րի մեջ, ինչպեւ և փոխելու պայմանագրի կետերը:
Այդ փոփոխութիւնների հետ ապահովագիրը չհամա-

ձայնվելու դեպքում, Պետապը կարող է ապահովագրությունը դադարեցնել:

§ 28. Այն դեպքում, յերբ ապահովագրված բուսական մշակույթները անցնում են մեկ ուրիշ իրավունքին վորպես սեփականություն, նոր տերը պարտավոր է այդ առթիվ հայտնելու Պետապին: Այդ հայտարարության օրվանից ապահովագրության բոլոր իրավունքները և պարտականությունները անցնում են նոր տիրոջ:

ԳԼՈՒԽ VІІ

Կեդմերի փոխհարաբերությունները ապահովագրական գեպից եետ

§ 29. Ապահովագիրը պարտավոր է անմիջապես հայտնելու պետապի գործակալին կամ գյուղխորհրդին կարկտահարության մասին, համենայն դեպս նա 3 օրվա ընթացքում անպայման պետք է հայտնի:

§ 30. Վնասների լուծարքելու ժամկետները սահմանում է պետապը համաձայն բուսական մշակույթի բնախոսական դարգացման պայմաններին՝ նրա տեսակի և նշանակության, բայց վոչ ուշ քան նրա բերքի մասնավոր կամ լիովին հավաքումը:

Այն դեպքերում, յերբ կարկտահարությունից բուսամշակույթները հիմնովին փլատված են, կամ այնքան փլատված, վոր ապահովագիրը ցանկանում է վերացանել, կամ անմիջապես միջոցներ ձեռք առնել կարկտահար յեղած մշակույթի մնացորդները ոգտագործելու, Պետապը շտապ կարգով պետք է փլատը վորոշի և րավարարի:

§ 32. Ապահովագիրը, փլատի ճիշտ չափը վորո-

շելու համար, պետք է Պետապի բոլոր պահանջները, այդ ուղղությամբ, կատարի: Այդ դեպքում ապահովագիրը կարկտահարությունից հետո մինչև փլատի լուծարքային ահտ կազմելը պարտավոր է՝

ա) Չարածացնել կարկտահար յեղած տարածությունը և վոչ մի գործողություն չկատարել, վորը կարող է այս կամ այն կերպ նվազեցնել կարկտահար յեղած մշակույթի բերքի մնացորդները:

բ) Շարունակել իրա հաշվին մշակել և խնամք տանել կարկտահարությունից ազատ մնացած մշակույթի մասը, յեթե այդ պահանջում է մշակույթի նորմալ բնախոսական դարգացումը:

գ) Կարկտահար յեղած հողամասից չտեղափոխել բերքը մի այլ հողամաս, յեթե այդ չի պահանջում մշակույթի նպատակահարմար ոգտագործում:

§ 32. Այն դեպքերում, յերբ փլատի լուծարքը շտապ կարգով չի կատարված, Պետապը իրավունք ունի մինչև լուծարքելը կատարի նախնական զննություն կարկտահար մշակույթների՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

ԳԼՈՒԽ VІІІ

Վնասի յեվ ապահովագրական վարձատրության չափի վորոշումը

§ 33. Վնասը վորոշելու ահտը (լուծարքային ահտ) կազմում է կարկտահար յեղած բուսական մշակույթների զննության հիման վրա. այդ դեպքում ապահովագիրը պարտավոր է 3 օրվա ընթացքում տալու Պետապի ներկայացուցիչին այն բոլոր տեղե-

կությունները, վորոնք անհրաժեշտ են ֆնասի չափը վորոշելու համար:

Ակտը ստորագրում են Պետապի ներկայացուցիչը և ապահովագրերը կամ նրան փոխարինողը:

§ 34. Կարկտահար յեղած բուսական մշակույթներին ֆնասի չափը (§ 3 կ. «ա») վորոշում են գումարելով հետևյալ ելմանները.

ա) Կարկտահար յեղած հողամասի տարածությունը:

բ) Ապահովագրված մշակույթի բերքի չափը, յեթե կարկտահարություն տեղի չունենար:

գ) Վնասը վորոշելու օրվա պաշտոնական գները, սահմանված տվյալ մշակույթների բերքի համար, կամ այդպես ու բացակայության դեպքում, շուկայի գները:

դ) Վնասվածության աստիճանը: Այդ վորոշելու համար հաշվի յե առնվում թե կարկտահարության ֆնասը և թե նրան ուղեկցող հեղեղի ֆնասը: Վնասվածության աստիճանը վորոշվում են տոկոսային հարաբերությամբ ամբողջ բերքի վերաբերմամբ յեթե կարկտահարություն տեղի ունեցած չլիներ:

ԾԱՆՈԹ.—1. Բերքի ամբողջական ծախսը յեկամուտը վորոշվում են, յեթե ապահովագրական դեպք տեղի ունեցած չլիներ, հատուկ տեխնիքական հրահանգով մշակված Պետապի կողմից:

ԾԱՆՈԹ.—2. Յեթե Պետապը պատասխանատու յե նաև բերքի վորակի նվազմանը, ապա ֆնասվածության աստիճանը վորոշվում են տոկոսային հարաբերությամբ բերքի արժեքի վերա-

բերմամբ յեթե կարկտահարություն տեղի ունեցած չլիներ:

§ 35. Ապահովագրված բույսերի ֆնասը վորոշելիս սահմանվում են՝ ա) ֆնասվածի քանակությունը, թիվը, բ). ֆնասվածության աստիճանը, գ). պաշտոնական գները, կամ նրանց բացակայության դեպքում, շուկայի գները:

§ 36. Ապահովագրական վարձատրության չափը վորոշվում են փաստական ֆնասի չափի հարաբերությամբ ամբողջ ապահովագրական գումարի վերաբերմամբ արտահայտած բերքի իրական արժեքով:

Յեթե ապահովագրական գումարը ավելի բարձր են լուծարվող մշակույթի իրական արժեքից, ապա ապահովագրական վարձատրությունը վորոշվում են գումարելով ֆնասվածության տոկոսը (աստիճանը) բերքի իրական արժեքին:

Բերքի իրական արժեքը վորոշվում են գումարելով § 34. «ա» «բ» «գ» ելմանները:

Համեմայն դեպս ապահովագրական վարձատրությունը չի կարող բարձր լինել ապահովագրական գումարից:

§ 37. Յեթե վորեւ բուսական մշակույթի բերքի հավաքելը, շնորհիվ նրա զարգացման բնական պայմանների, կատարվում են մի քանի անգամ, հաջորդաբար, և յեթե կարկտահարությունը տեղի յե ունեցել առաջի կամ յերկրորդ անգամ հերթական բերքի հավաքումից հետո, ապա պետք են ֆնասի չափը վորոշել համաձայն § 34-ի, ամեն անգամ հաշվի առնելով ֆնացած բերքը: Այն դեպքում յերբ ապահովագրական վարձատրությունը վճարվում են ապահովագրական

գումարի լրիվ չափով, ապա հետագա բերքատու-
թյունը պետք է ապահովագրել նորից ընդհանուր հի-
մունքներով:

§ 39. Յեթե լուծարքից հետո ապահովագրի
կվերացանի կամ կվերատնկի իրա բուսական մշա-
կույթները բացի այն դեպքերից վորոնք նախատես-
նրված են § 40-ով, ապա ապահովագրությունը կհա-
մարվի դադարեցնել և ապահովագին նոր ցանքսի
համար ապահովագրիը պետք է վճարի ընդհանուր
հիմունքներով, յեթե ցանկանա նորից ապահովագրել:

Յեթե չի վերացանվի, ապա ապահովագրու-
թյունը պահպանում է իրա ուժը սակայն արդեն
նվազեցրած ապահովագրական գումարով տրված ապա-
հովագրական վարձատրության գումարի չափով:

§ 40. Յեթե կարկտահարությունից փնասված է
հատակ բուսական մշակույթներ, թված սույն հոդ-
վածի ծանոթության մեջ, և յեթե տեղում գննու-
թյունից հետո կողմերի փոխադարձ համաձայնու-
թյամբ նպատակահարմար գտնվի վերականգնել
փնտված մշակույթը, ապա Պետապը վճարում է
ապահովագրիին բոլոր այն ծախքերը, վորոնք ան-
հրաժեշտ են փնտված մշակույթը վերականգնելու հա-
մար:

Վնասը վճարելուց հետո ապահովագրությունը
պահպանում է յուր ուժը սակայն նվազեցրած ապա-
հովագրական գումարով ծախքերի համար տված գու-
մարի չափով:

ԾԱՆՈԹ.— Հատուկ բուսական մշակույթներ
հանդիսանում են ծխախոտը, խաղողը, գենագեր-
չակը, շաքարեղեգը, կտավահատը, կանեփը,
բամբակը, քունջութը, պտղատու ծառերը, դեղա-
բույսերը:

§ 41. Ապահովագրիը և պետապի ներկայացու-
ցիչը փաստի չափի վորոշման անհամաձայնության
դեպքում, ինչպես և գործի ոգտի համար, ինչպես
Պետապը, այնպես և ապահովագրիը կարող են պա-
հանջել վորպեսզի փաստի չափը վորոշի եքսպերտիզան
(փորձագետները): Այդ դեպքում, յեթե կողմերը չեն
համաձայնվի ունենալ մեկ ընդհանուր եքսպերտ
(փորձագետ), կարող են յուրաքանչյուրը նշանակել
իրա փորձագետը: Փորձագետը պետք է նշանակվի
վոչ ուշ 3 օրվանից հետո, նրան այդ մասին հայտա-
բարություն տալուց հետո, յեթե փնտված բույսերի
գրությունը չի պահանջում ավելի կտրճել այդ ժամ-
կետը: Յեթե կողմերից մեկն ու մեկը նշանակված
ժամանակից չի ունենա իրա փորձագետը, ապա մյուսը
իրավունք ունի անմիջապես տեղում գննություն կա-
տարի փնտը վորոշելու համար:

Դաշտային գննության արձանագրությունը և
փորձագետի յեղրակացությունը կազմվում է 2 օրի-
նակից յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ տա-
լու համար:

Փորձագետը յուր վարձատրությունը ստանում
այն կողմից, վորը նրան հրավիրել է. իսկ յեթե հրա-
վիրված է մեկ ընդհանուր փորձագետ, ապա նրա
վարձատրությունը վճարում է՝ կողմերի հավասարու-
թյան հիմունքներով: Այդ ծախքը չի մտնում ապա-
հովագրական վարձատրության մեջ:

§ 42. Ապահովագրիը զրկվում է ապահով. վար-
ձագրություն ստանալու իրավունքներից հետևյալ
դեպքերում.

ա) Յեթե ապահով. վարձատրություն ստանալու

ապահանջը ներկայացվում է ապահովագրական դեպքից 2 տարի հետո:

բ) Բոլոր ապահովագրությունների դադարեցման դեպքում ինչպես ասված է §§ 16 և 17-ում:

§ 43. Պետապը իրավունք ունի չվճարելու ապահով. վարձատրություն՝

ա) Յեթե ապահովագիրը հնարավորություն ունենալով հանդերձ, չի հայտնի Պետապին ապահովագրական դեպքի մասին § 29-ում նիշված ժամկետին.

բ) Յեթե ապահովագիրը, հնարավորություն ունենալով հանդերձ, միջոցներ ձեռք չի առնի փրկելու համար ապահովագրական դեպքի սպառնալիքին յենթակա գույքը կամ գիտավորյալ գործողություններով կավելացնի ֆնասի չափը և կամ այն կտեղափոխի մի այլ տեղ ֆնասված գույքի ֆնացորդները ծածկելու համար:

դ) Յերբ ապահովագիրը կխատտի §§ 21, 25, 27, 33 և § 29-ի ծանոթությունը:

ԳԼՈՒԽ IX

§ 44. Ապահովագրական վարձատրությունը վճարվում է ապահովագիրին, կամ շահույթավորին, վորի մասին հիշատակված է ապահովագրական անգորրագրում: Վոչ ուշ քան մեկ ամսից հաշվելով ֆնասի վորոշելու որվանից: Սույն § 6-ում նախատեսված դեպքում, ապահովագր. վարձատրության ֆնացորդը տրվում է ապահովագրված և կարկտահարությունից ֆնասված բուսական մշակութայինների սեփականատիրոջը:

§ 45. Այն դեպքում յերբ ապահովագիրը հա-

մաձայն չի վորոշված վարձատրության չափի հետ և բողոք և ներկայացնում, կամ դատական հայց և հարուցում, վարձատրությունը այն չափով, ինչպես վորոշել է Պետապը: Երվում է նրան նախորդ հոգվածով նախատեսված ժամկետին:

ԳԼՈՒԽ X

Բողոքարկում յեվ դասի հաճնում

§ 46. Պետապին յենթակա աշխատակիցների սխալ գործունեությունների դեմ կարելի յե բողոք ներկայացնել դատական այն մարմիններին, ուր գտնվում է Պետապի համապատասխան մարմինները: Հայտատապի դեմ յեղած բողոքները քննում է Անդրպետապի վարչությունը, իսկ Անդրպետապի վարչությունը դեմ՝ գլխավոր վարչությունը:

§ 47. Կամավոր ապահովագրության վերաբերմամբ դատական հայցերը պետք է ներկայացնել այն դատական մարմիններին, վորտեղ գտնվում է Պետապի համապատասխան մարմինը:



56211207N



դմսմսմսմս դսմսմսմս >>

22

44.182